

<i>Համարը</i>	ՀՕ-69-Ն	<i>Տեսակը</i>	Մայր
<i>Տիպը</i>	Օրենք	<i>Կարգավիճակը</i>	Գործում է
<i>Մկրտնադրումը</i>	ՀՀՊՏ 2015.07.08/42(1131) Հոդ.572	<i>Ընդունման վայրը</i>	Երևան
<i>Ընդունող մարմինը</i>	ՀՀ Ազգային ժողով	<i>Ընդունման ամսաթիվը</i>	09.06.2015
<i>Ստորագրող մարմինը</i>	ՀՀ Նախագահ	<i>Ստորագրման ամսաթիվը</i>	02.07.2015
<i>Վավերացնող մարմինը</i>		<i>Վավերացման ամսաթիվը</i>	
<i>Ուժի մեջ մտնելու ամսաթիվը</i>	18.07.2015	<i>Ուժը կորցնելու ամսաթիվը</i>	

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

### Օ Ր Ե Ն Ք Ը

Ընդունված է 2015 թվականի հունիսի 9-ին

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

**Հոդված 1.** Հայաստանի Հանրապետության 2003 թվականի ապրիլի 18-ի քրեական օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգրք) 119-րդ հոդվածում՝

1) վերնագիրը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

**«Հոդված 119. Ֆիզիկական ուժեղ ցավ կամ հոգեկան ուժեղ տառապանք պատճառելը».**

2) 1-ին մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«1. Անձին դիտավորությամբ ֆիզիկական ուժեղ ցավ կամ հոգեկան ուժեղ տառապանք պատճառելը, եթե դա չի առաջացրել սույն օրենսգրքի 112-րդ և 113-րդ հոդվածներով նախատեսված հետևանքները, և եթե բացակայում են սույն օրենսգրքի 309.1-ին հոդվածով նախատեսված հանցագործության հատկանիշները՝

պատժվում է ազատազրկմամբ՝ առավելագույնը երեք տարի ժամկետով:»:

**Հոդված 2.** Օրենսգիրքը լրացնել հետևյալ բովանդակությամբ 309.1-ին հոդվածով.

**«Հոդված 309.1. Խոշտանգումը**

1. Պաշտոնատար անձի կամ պետական մարմնի անունից հանդես գալու իրավասություն ունեցող այլ անձի կողմից կամ նրա դրդմամբ, կարգադրությամբ կամ գիտությամբ որևէ անձի դիտավորությամբ ֆիզիկական ուժեղ ցավ կամ հոգեկան ուժեղ տառապանք պատճառելը՝ այդ կամ երրորդ անձից տեղեկություն կամ խոստովանություն ստանալու նպատակով կամ այն արարքի համար պատժելու նպատակով, որն այդ կամ երրորդ անձը կատարել է կամ որի կատարման մեջ կասկածվում կամ մեղադրվում է, ինչպես նաև այդ կամ երրորդ անձին վախեցնելու կամ որևէ արարք կատարելուն կամ կատարումից ձեռնպահ մնալուն հարկադրելու նպատակով կամ ցանկացած բնույթի խտրականության վրա հիմնված ցանկացած պատճառով՝

պատժվում է ազատազրկմամբ՝ չորսից ութ տարի ժամկետով՝ որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելով՝ առավելագույնը երեք տարի ժամկետով:

2. Նույն արարքը, որը կատարվել է՝

- 1) երկու կամ ավելի անձանց նկատմամբ,
- 2) անչափահասի կամ հանցավորից նյութական կամ այլ կախվածություն ունեցող անձի նկատմամբ,
- 3) ակնհայտ հղի կնոջ նկատմամբ,
- 4) մի խումբ անձանց կամ կազմակերպված խմբի կողմից,
- 5) առանձին դաժանությամբ,
- 6) անձի կամ նրա մերձավորի նկատմամբ՝ կապված այդ անձի կողմից իր ծառայողական գործունեության կամ հասարակական պարտքի կատարման հետ,
- 7) անզգուշությամբ առաջացրել է ծանր հետևանքներ՝

պատժվում է ազատազրկմամբ՝ յոթից տասներկու տարի ժամկետով՝ որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելով՝ երեք տարի ժամկետով:»:

**Հոդված 3.** Օրենսգրքի 341-րդ հոդվածում՝

- 1) վերնագիրը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

**«Հոդված 341. Դատավորի, դատախազի, քննիչի կամ հետաքննության մարմնի կողմից ցուցմունք կամ բացատրություն կամ կեղծ եզրակացություն տալուն կամ սխալ թարգմանություն կատարելուն հարկադրելը».**

2) 1-ին մասի «հետաքննություն կատարող անձի կողմից» բառերը փոխարինել «հետաքննության մարմնի կողմից բռնություն կամ» բառերով, իսկ «վկային, կասկածյալին, մեղադրյալին, ամբաստանյալին կամ տուժողին ցուցմունք» բառերը՝ «դատավարությանը մասնակցող անձանց ցուցմունք կամ բացատրություն» բառերով, ինչպես նաև նույն մասի սանկցիայի «երկու» բառը փոխարինել «երեք» բառով.

3) 2-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«2. Նույն արարքը, որը գուգորդվել է խոշտանգմամբ՝

պատժվում է ազատազրկմամբ՝ չորսից ութ տարի ժամկետով՝ որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելով՝ առավելագույնը երեք տարի ժամկետով:».

4) 3-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«3. Սույն հոդվածի առաջին կամ երկրորդ մասով նախատեսված արարքը, որը կատարվել է՝

1) երկու կամ ավելի անձանց նկատմամբ,

2) անչափահասի կամ հանցավորից նյութական կամ այլ կախվածություն ունեցող անձի նկատմամբ,

3) ակնհայտ հղի կնոջ նկատմամբ,

4) մի խումբ անձանց կամ կազմակերպված խմբի կողմից,

5) առանձին դաժանությամբ,

6) անձի կամ նրա մերձավորի նկատմամբ՝ կապված այդ անձի կողմից իր ծառայողական գործունեության կամ հասարակական պարտքի կատարման հետ,

7) անզգուշությամբ առաջացրել է ծանր հետևանքներ՝

պատժվում է ազատազրկմամբ՝ յոթից տասներկու տարի ժամկետով՝ որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելով՝ երեք տարի ժամկետով:»:

**Հոդված 4.** Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

**Հայաստանի Հանրապետության  
Նախագահ**

**Ս. Սարգսյան**

2015 թ. հուլիսի 2

Երևան

ՀՕ-69-Ն